

Նագրութիւններէց կամ այլ աղբիւրներէց, տարաբաղդաբար տեղեկութիւն չենք ստանում: Արդարև խոստովանում եմ, արձանագրութիւնները լիովին չեն կարգացուած իմ կողմից, ինչպէս յիշեցի վերը, ըստ որում, հակառակ իմ սովորութեան և ցանկութեան, այդ վանքին այցելած եմ ընդամենը մի անգամ որ շատ քիչ է՝ այլ քի առաջ ունենալով արձանագրութեանց եղծուիլը և փակագրութիւնը: Սակայն այդ ամենը ուղղելի հանգամանքներ էին՝ եթէ այցելութիւնս առաջին և վերջին անգամը լինէր: Բայց և այնպէս փոքր վստահութեամբ կարելի է ասել որ բոլոր արձանագրութիւնները եթէ ամբողջովին լուսաբանուէին անգամ՝ եկեղեցու պատմութեանը էլի ոչինչ աւելանալ կարող չէր: Երևի փակագրութեանց դժուարութիւնից է եղել որ Ջալալեանի գիրքը չէ բովանդակում իւր մէջ յիշեալ արձանագրութիւններէց և ոչ մի հատն անգամ:

Ինչև իցէ, յիշեալ արձանագրական շրջանը եկեղեցու կենդանութեան վերաբերութեամբ կազմում է 1322 մինչև 1502 թուականը, կամ 180 տարի ժամանակամիջոց: Իմացանք որ այդ շրջանում եկեղեցին ստացել է նուէր մի քանի այգիներ և 1330 թուականին շինուել է զանգակատունը ոմն Յովհաննիսի և իւր Թաճնայ կողակցի շնորհիւ:

Թէպէտ ոչ շատ հեռու վանքից գտնուում են մի երկու թուրք գիւղեր, սակայն Սպիտակաւոր սուրբ Աստուածածնի եկեղեցին անասնոց արտահոսութիւնից ազատ է մնացել: Սորա պատճառը այն է, որ վանքը կանգնած է Բաշքեանդցոց հողաբաժնի մէջ, ուր թուրքերը մուտք ունենալ կարող չեն: Այս վանքից ճանապարհը տանում է դէպի հիւսիս մօտակայ Շատինու վանքը (գլ. 1. Դ.) մերթ ծաղկազարդ, մերթ անտառապատ լեռների լանջերով, որտեղից սքանչելի տեսարան է բացւում դէպի արևմուտ: Բիւլբիւլ օլան գիւղի վրայից դէպի Ալագեազ գետի ձորը և նորանից վեր Աբանայի բարձրութիւնները: Բայց մենք կերթանք արևելք, Բաշքեանդի բերդը տեսնելու:

(Շարունակելի)

ԲԱՋԲԵՐՈՒՆԻ

## ԱԶԳԱՅԻՆ

Երբ Կոմս Մ. Դ. Լորիս—Մելիքեանի մահուան բոլոր հասարակութեան. Վեհափառ Հայրապետն ամենայն Հայոց Տ. Տ. ՄԱԿԱՐ հեռուեալ մխիթարական հեռագիրն ուղղեց նորա վըշտացած ամուսնուհի Ի Նիցցա.

ԿՈՄՍՈՒՅԻ ՏԻԿԻՆ ԼՈՐԻՍ — ՄԵԼԻԿԵԱՆԻՆ

Տխուր բոթ մահուան ամուսնոյ Չերոյ ի խոր խոցեաց զսիրտ մեր հայրական: Ըմենակարողն Ըստուած զհոգի նորա ի լոյս երեսաց իւրոց հանգուցէ և մխիթարեսցէ զվշտագնեալ սիրտ ձեր, ժառանգաց և ազգակցաց Նորին տալով ամենեցուն զչնորհ հնազանդելոյ սուրբ կամաց իւրոց և լինելոյ ժառանգք բարեմասնութեանց հանգուցելոյն:

Նորին Օծութիւնը ստացաւ Կոմսուհի Լորիս — Մելիքեանից հեռեեալ պատասխանը.

Յոյժ զգածուած Չեր հայրապետական մխիթարական խօսքերով, խնդրում եմ բարեխօս լինել առաջի Ըմենակալին վասն հանգստեան հոգւոյ հանգուցելոյն և նորա զաւակները յանձնում եմ Չեր սուրբ աղօթքին:

Թիֆլիզի Կոնստանտինոպոլսի հեռագրում է Նորին Օծութեան. Ինչպէս լալում է Կոմս Լորիս — Մելիքեանի գին բերում է Թիֆլիզ ամփոփելու վանքի գաւթում: Կոնստանտինոպոլսի յառաջագոյն խնդրում է Չեր Օծութեան թոյլտուութիւնը:

Այս հեռագրին Նորին Օծութեան կողմից հեռեեալ պատասխանը գրուեցաւ.

Թոյլատրեմք թաղել զդի հանգուցեալ Կոմսին Լորիս — Մելիքեանց ի գաւթի վանաց Սայր եկեղեցւոյ յարևելից կուսէ, ուր գերեզմանք են եպիսկոպոսաց և զեններալաց:

Թիֆլիզի քաղաքային խորհրդարանի մէջ ամսոյս 16ի նիստում քննութեան ենթարկվել է մի հետաքրքիր խնդիր: Այս խնդրի յարուցման առիթ տուել է Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Պ. Սանովսկու առաջարկութիւնը քաղաքային վարչութեան, որ սա բարեհաճի Թիֆլիզի պրոգիմնազիանի համար որոշել իւր գումարից տարեկան մօտ 10,000 ռ. որպէս զի կարելի լինի այդ դպրոցում բանալ եւ 5 թգ ու 6 թգ դասարաններ, որովհետեւ նորա ուսումնաւարանները չեն կարողանում իրանց ուսումն շարունակել Թիֆլիզի միւս գիմ-

Նազդիոններում տեղի պակասութեան պատճառով սոցա մէջ։  
 Պ. Հոգաբարձուն իւր այս առաջարկութիւնն իրաւացի է համարել անելու եւ այն պատճառով, որ պրագիմադիոնի աշակերտաց մեծամասնութիւնը բ՛իկներ են և այն բուն Քրիստիոնացիք, այն է՝ 39 ուսու 74 հայ 25 վրացի, 5 լեռնական, 10 հրէայ և 10 եւրոպացի, ընդամենը 163, որոնց 156ը բնիկ Քրիստիոնացիք։

Քաղաքային վարչութիւնն այս առաջարկութիւնն իւր կարծիքի հետ միասին ներկայացնում է խորհրդարանին 16 ներկայ յունվարի։

Իրաւասուններից ոմանք անհնար են համարում կատարել Պ. Հոգաբարձուի առաջարկութիւնը միայն քաղաքի արդեանց պակասութեան պատճառով, թէև սրտանց համակրում են առաջարկութեան։ Իրաւասու Պ. Նիկողաձէն յայտնում է, որ ուսման համար քաղաքը ոչինչ չպէտք է խնայէ և առաջարկում է որ ընդ ընտել Պ. Հոգաբարձուի պահանջը միայն պայմանով, որ տեղական լեզուները պիտական դպրոցում պարտաւորական լինին բոլոր դասատանց մէջ։ Այդ լեզուների ուսումնասիրութիւնը յոյժ կարևոր է լաւ թարգմաններ պատրաստելու համար և այդ չի վնասիլ ուսու լեզուի ուսման և տարածման, և իբրև ապացոյց ասածին իրան է ներկայացնում, որ աւելի նպաստել է ուսու լեզուի տարածման Կովկասում քան որ և է գիմնադիոն։

Իրաւասու Պ. Եւանգուլեանցը հաստատելով Պ. Նիկողաձէի խօսքն աւելացնում է, որ տեղական լեզուների ուսումնասիրութիւնն ոչ մի այն լաւ թարգմաններ կգատրաստէ, այլ և երիտասարդներին սերտութեամբ կկապէ իւր հայրենեաց հետ և հետեւաբար ընդհանրապէս՝ Սուստատանի հետ։


Իրաւասու Պ. Քամաձեանցը մտանայց իրաւ տեղական լեզուների պետական դպրոցներում պարտաւորական չլինելու ախուր հետեւանքների վերայ, մանաւանդ հայ Լուսաւորչականների համար։ Նորա գրիված են իրենց կրօնն ուսանելու հնարաւորութիւնից։ Մինչդեռ բոլոր կայսերութեան մէջ ուսման և կրթութեան հիմքը կրօնն է բնութենուած, Հայ լուսաւորչականաց համար դա պակաս է և այս շատ վատ ազդեցութիւն է գործում իրիսանց կրօնական-քարոյական դաստիարակութեան վերայ։

Իրաւասու Պ. Ռոտինտանցը յայտնեց, որ օրիորդական գիմնադիոնում ուսումնաւարտները մեծում են այգեբրայական խնդիրներ կրեք անյարտներով, այն ինչ այգթք չգիտեն։ Նրանցից ոչ ոք եկեղեցի չէ գնում։ Արդիսի մայրեր կարող են նորա լինել։ Պ. Իրաւասուի կարծիքով աւելի լաւ կլինէր, որ օրիորդներն այգեբրայական խնդիրներ լուծելու փոխարէն կրօն լաւ

ուսանելին:

Կարևոր գումարը գտնելու համար Պ. Նիկալաձէն մասնանիչ է անում գնահատութեան  $\frac{1}{4}/0$  ի վերայ: Իսկ Պ. Ռոտինեանցը տաւոր մտրթելու հարկը 60 կոպ. 1 ուռբլու բարձրացնել առաջարկում է: որով կարևոր գումարը կգոյանայ: Իսկ Պ. Սուճգուկեանցը յայտնում է: որ ուսման գործն այնքան վսեմ է: որ եթէ դորա համար հարկաւոր լինէր մինչև իսկ ծառայողների ուճիկները նուազեցնել — վերջինները սրան էլ պիտի համաձայնէին:

Վերջապէս քաղաքագլխի պաշտօնակատար Պ. Իզմայիլեանցը խնդիրը ձեռակերպելով քուէի է դնում այն և միաձայն հաւանութեամբ ընդունուում է կատարել Պ. Հոգաբարձուի առաջարկութիւնն վերոյիշեալ պայմաններով, այն է որ դպրոցներում տեղական լեզուներն և հայ կրօնի դասատուութիւնը պարտաւորական լինին հաւասար միւս առարկաների: Վճուռում է խնդրել Պ. Հոգաբարձուին դիմելու և միջնորդելու ուր հարկն է այս խնդրի յաջող լուծման համար:



Թիֆլիզի պ. իրաւասունների իմաստուն որոշման առթիւ պարտք է համարում և խմբագրութիւնս մի քանի խօսք ասել: Մի կողմ թողնելով կրօնի դասաւանդութեան կարևորութիւնն, որ ամենքի համար պարզ է: տեղական լեզուների ուսումնասիրութիւնն ոչ միայն կնպաստէ լաւ թարգմաններ պատրաստելու ու սերտութեամբ կկապէ տեղական երիտասարդութիւնն իւր հայրենեաց հետ — հետեւաբար եւ բոլոր Ռուսաստանի հետ, ոչ միայն հօգնէ նոյն իսկ ուս լեզուն աւելի լաւ ուսումնասիրելու, այլ և այլ լեզուների ուսումնասիրութիւնն անհրաժեշտ է ընդարձակ Վովկասի ժողովրդագրական և երկրագրական ուսումնասիրութեան համար: Ի՞նչպէս կարելի է Վովկասի բազմացեղ և բազմալեզու ազգերի վարքը, բարքը, պատմութիւնը, սովորութիւնքը, աւանդութիւնքը, հեքիաթներն, ասացուածներն ու առածներն, որոնք նոցա կեանքի փիլիսոփայութիւնն են բովանդակում, նոցա աշխարհայեացքը, ընտանեկան, ընկերական, հասարակական և կրօնական հայեցուածքները ուսումնասիրել և նոցա լեզուներին և սոցա ոգւոյն քաջ տեղեակ լինելու: Վովկասի երկիրը հնութեանց երկիր է: նորա իւրաքանչիւր քայլը մի հնութիւն է բովանդակում և վկայ է որևէ անցեալ նշանաւոր պատմական իրողութեան: Մի՞թէ Վովկասի հնութիւնն ուսումնասիրել կարելի է առանց գէթ Հայ և Վրացի լեզուների հմտութեան: Այսպէս Վովկասի ժողովրդագրական, հնագիտական և պատմական ուսումնասիրութեան համար անհրաժեշտ է ոչ միայն հայ և վրաց նոր լեզուների ուսումնասիրութիւնն, այլ և նոցա հին դասական (գրարար) լեզուի քաջ հմտութիւնն, որովհետև հնութեանց արձանագրութիւնք և հին ձեռագիր մատենաք, որոնք մեծ գանձ են բովանդակում գիտութեանց համար, այդ լեզուներով են գրուած: Բարեխնամ կառավարութիւնք գիտութեան յառաջդիմութեան համար ամեն տեսակ գիտնական ընկերութեանց պաշտպան և նպաստիչ է հանդիսանում: նշանաւոր գումարներ պահում գիտնականներ հասցնելու համար, որ կարող լինէին աշխարհիս ամենահեռաւոր ազգերն ու երկիրներն ուսումնասիրել, քննչպիսի են Մոզդոլիս:

Տիրէթ, Աւստրալիական կղզիք, Ճապոնիա և այլն. և այս ազգերն ու երկիրները հետազոտող ճանապարհորդներին ամեն տեսակ դիւրութիւն տալիս է և նիւթական ապահովութիւն, որքան ևս աւելի նորա սրտին մօտիկ պիտի լինին և հետաքրքրական իւր հպատակ ազգերի և երկիրների կեանքի ու սովորութիւնները, նոցա անցեալն ու ներկայն իրանց հասարակական, կրօնական, մտաւոր և ընտանեկան կեանքի բոլոր ճիւղերով: Այս այսպէս լինելից յետ քաղցր է յուսալ որ պ. հոգաբարձուի միջնորդութիւնը Թիֆլիզի քաղաքային խորհրդարանի առաջարկութեան մասին բարեյաջող էլք կունենայ:

## ՊԱՅՏՈՆԱԿԱՆՔ

### ՔԱՂՈՒԱՄՔ ԵՐԱԳԻՐՈՒԹԵԱՆՅ ՍԻՆՕԴԻ

Ի 19 Դեկտ. Ելիսաւէտապօլցի հանգուցեալ բարեպաշտ հոյազգի Սիմէօնն Չօմախլիանց կտակեալ է մի մի հարիւր բուբլի Սրբոց Աթոռոցն էջմիածնի և Երուսաղէմի, զորս Սրբազան Սինօզն ստանալով ի ձեռն հոգեւոր կառավարութեան տեղւոյն յայտարարութեամբ ի 29 հոկտ. համարաւ 741. տնօրինեաց զարժանն: Աստուած լուսաւորեացէ զհոգի հանգուցելոյն և զնուէրս նորա ի հաճոյս իւր ընկալցի:

Ի 23 Դեկտ. Վիճակոյղին Կոնստանտնուպոլիսի Հայոց Բէտարաբիոյ և Նոր Նախիջևանի խնկրեալ է ի Սրբազան Սինօզէն հրահանգութիւն, յայտարարութեամբ ի 17 հոկտ. տարւոյս համարաւ 2587, թէ կարե՞ն արդեօք օտարադաւան քրիստոնեայք կատարել զպարտաւորութիւնս խաչակալաց և կամ կնքահարց ի ժամանակս պսակաց և մկրտութեանց Ժողովրդականաց մերոցորում և Սրբազան Սինօզն պատասխանեալ է, թէ՛ Որովհետեւ կնքահայրն համարի առաջի Աստուծոյ, ըստ կանոնաց սրբոց Եկեղեցւոյս՝ երաշխաւոր մկրտելոյն և դաստիարակիչ, ի քրիստոնէական հաւատս և ի ծէսս. և զի օտարազնեայ քրիստոնեայք ունին զբազում խտրութիւնս ի նոսին ի մէնջ՝ վասնորոյ, ոչ է պառշաճ կատարել նոյնպիսեաց զպաշտօն կնքահայրութեան մանկանց մերս Եկեղեցւոյ: Իսկ վասն կատարելոյ օտարադաւան քրիստոնէից զպարտաւորութիւնս խաչեղբարց ի ժամ պսակման՝ ոչ գնէ արգելս, զորոց և շրջաբերականաւ ծանուցեալ է հոգեւոր Ասենից ի հրահանգութիւն:

յ30ն Դեկտ. Սրբազան Սինօզն ունելով պատճառ զհասական աններելի պսակակատարութիւն Պօղոս քահանայի Տէր Պօղոսեան Եզդուբու գեղջ Փամբակու, որ պսակեալ է զնոյն գիւղաղի Գրիգորն Պետրոսեան ընդ սանաւօրն իւրում. և ընդ ճմին ստուգելով ի ձեռն հոգեւոր կառավարութեանն Ալէք-